

ArCa կենսաթոշակային պլաստիկ քարտի տրամադրման պայմանները և սպասարկման սակագները

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ՄԱԿԱԳՆԵՐ*
Քարտի տրամադրում	անվճար
Տարեկան սպասարկման վճար	0 ՀՀ դրամ
Չնվազող մնացորդ	չի սահմանվում
Կցված քարտի տրամադրում	անվճար
Կցված քարտի տարեկան սպասարկման վճար	0 ՀՀ դրամ
Քարտի կորստի, վնասման դեպքում նոր քարտի տրամադրում	900**
Քարտի PIN կոդի կորստի դեպքում նոր քարտի տրամադրում	700**
Կանխիկի տրամադրում ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ կանխիկացման կետերում	0.0%
Կանխիկի տրամադրում ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ դրամարկղից՝ առանց քարտի կիրառման	1%, min 500 ՀՀ դրամ
Կանխիկի տրամադրում այլ բանկերի կանխիկացման կետերում	0.50%
Հաշվից քաղվածքի տրամադրում	անվճար
Լրացուցիչ քաղվածքի տրամադրում	անվճար
Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվեգրող տարեկան տոկոս	3%
Քարտի բլոկավորում	0
Քարտի ապաբլոկավորում	Բանկի բանկոմատում առգրավման դեպքում՝ 0 ՀՀ դրամ, Այլ բանկի բանկոմատում առգրավման դեպքում՝ 200 ՀՀ դրամ **
Օրեկան կանխիկացման գործարքների քանակը	10 անգամ
Մեկ օրվա ընթացքում թույլատրվող կանխիկացման գործարքների ընդհանուր առավելագույն գումար	500,000
Մեկ գործարքի ընդհանուր առավելագույն գումարը	300,000
Մուտքագրվող առավելագույն գումարի մեծություն	չի սահմանվում
Վարկային գծի/օվերդրաֆտի դիմաց հաշվարկվող տոկոս	-
Կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրության ուղարկում (յուրաքանչյուր SMS հաղորդագրության համար)	30 ՀՀ դրամ
Քարտից քարտ կատարվող փոխանցումների դիմաց գանձվող միջնորդավճար	0.3%

*Ներառյալ ԱԱՀ

**նշված ծառայություններն առաջին դեպքի համար մատուցվում են անվճար, իսկ հետագայում՝ աղյուսակում նշված միջնորդավճարի համաձայն

ArCa կենսաթոշակային պլաստիկ քարտը տրամադրվում է 2 տարի ժամկետով:

ԾԱՆՈՒՑՈՒՄ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ քարտերը հնարավոր է պատվիրել Բանկի Գլխամասում և մասնաճյուղերում կամ օնլայն տարբերակով:	
<ul style="list-style-type: none"> ✓ Հաճախորդը նախքան քարտի պատվիրումը ծանոթանում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ կողմից ներկայացվող քարտերի տեսականերին, սպասարկման կանոններին և սակագներին: ✓ Հաճախորդը Բանկի Գլխամասում կամ մասնաճյուղերում լրացնում է դիմում համապատասխան քարտի տեսակի տրամադրման համար՝ ներկայացնելով անձնագրի, սոցիալական քարտի պատճենները և վճարելով սահմանված միջնորդավճարը: ✓ Հաճախորդին քարտը տրամադրվում է երեք բանկային օրվա ընթացքում անձնագրի և սոցիալական քարտի առկայության դեպքում: 	

Քարտը ստանալուց հաճախորդը.	<ul style="list-style-type: none"> ✓ Ստորագրում է քարտի դարձերեսի վրա նախատեսված հատուկ դաշտում ✓ Ստորագրում է պայմանագիրը և ծանուցումը ✓ Ստորագրում է PIN կոդի վրա նախատեսված տեղում
-----------------------------------	--

Յուրաքանչյուր քարտի հետ հաճախորդին կտրամադրվի.	<ul style="list-style-type: none"> ✓ Բանկային քարտերի սպասարկման և օգտագործման կանոններ ✓ Բանկոմատից օգտվելու ուղեցույց ✓ Բուկլետ
---	--



Տրամադրված պլաստիկ քարտն և քարտային հաշիվն ակտիվ են քարտի տրամադրման պահից:

Քարտային հաշիվներին միջոցների մուտքագրման ժամկետներն են.	<ul style="list-style-type: none"> • Նախորդ աշխատանքային օրվա 17:30-ից մինչև հաջորդ աշխատանքային օրվա 9:30-ը հաստատված մուտքերը կակտիվանան տվյալ աշխատանքային օրը՝ մինչև 10:30-ը: • Տվյալ աշխատանքային օրվա ընթացքում 09:30 -ից մինչև 13:30-ը հաստատված մուտքերը կակտիվանան տվյալ աշխատանքային օրը՝ մինչև 14:00-ը: • Տվյալ աշխատանքային օրվա ընթացքում 13:30-ից մինչև 17:30-ը հաստատված մուտքերը կակտիվանան տվյալ աշխատանքային օրը՝ մեկ ժամվա ընթացքում:
---	---

ԻՄԱՑԵՔ.

- 3 անգամ սխալ PIN հավաքելու դեպքում բանկոմատն ավտոմատ կառգրավի ձեր քարտը: Բանկոմատի կողմից քարտն առգրավելու դեպքում անմիջապես դիմեք այն բանկին, որին պատկանում է բանկոմատը կամ զանգահարեք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ՝ 54 79 58, 59 23 23 հեռախոսահամարներով:
- Քարտը ստանալիս անպայման ստորագրեք համապատասխան դաշտում: Ստորագրության բացակայությունը, կամ դրա անհամապատասխանությունը օրինական հիմք է ձեր քարտի սպասարկումը մերժելու և այն առգրավելու համար:
- PIN կոդը պարտադիր է բանկոմատներից կանխիկ գումար ստանալու և էլեկտրոնային տերմինալներով գործառնություններ կատարելու համար:
- Եթե կորցրել եք ձեր քարտը կամ ամենատարբեր պատճառներով այն մնացել է բանկոմատում, քարտի կորստի մասին անմիջապես հայտնեք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ՝ 54 79 58, 59 23 23 հեռախոսահամարներով կամ ԱրՔա վճարային համակարգի կենտրոն՝ 44 03 80 հեռախոսահամարով:
- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի կողմից թողարկված MasterCard/VISA համակարգի քարտերով USD, EUR, AMD, RUB և GBP արժույթներով գործարքներ կատարելիս գործարքի գումարը հաշվառելիս կիրառվում է բանկի կողմից հաշվառման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքը, այլ արժույթներով գործարքները հաշվառվում են MasterCard/Visa համակարգի կողմից սահմանված կանոններով:
- Քարտապանը կարող է բողոքարկել քաղվածքում արտացոլված գործառնությունները քաղվածքի տրամադրման օրվանից 30 օրվա ընթացքում: Այս ժամանակահատվածում քարտապանի կողմից առարկություններ չունենալու դեպքում քաղվածքը համարվում է Քարտապանի հետ համաձայնեցված: Առարկությունների դեպքում քարտապանն անձը հաստատող փաստաթղթով ներկայանում է բանկի գլխամաս կամ ցանկացած մասնաճյուղ և լրացնում է գործարքի բողոքարկման մասին դիմում, որից հետո Բանկը կատարում է համապատասխան ուսումնասիրություններ և առարկությունների ստացման օրվանից ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում ներկայացնում է հիմնավորված գրավոր պատասխան դրանք ընդունելու կամ մերժելու վերաբերյալ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

- Քարտապանի կողմից Քարտը կորցնելու դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին, և Քարտապանի պահանջով և Քարտապանի միջոցների հաշվին մինչև Քարտի գործողության ժամկետի ավարտը կամ որոշակի ժամանակահատվածների համար Բանկը կարող է Քարտը տեղադրել միջազգային վճարահաշվարկային համակարգի արգելափակման ցուցակում: Բանկին Քարտի կորստի մասին չտեղեկացնելու և Քարտի գործողության ժամկետի ընթացքում Քարտը միջազգային վճարահաշվարկային համակարգի արգելափակման ցուցակում Քարտապանի պահանջով և Քարտապանի միջոցների հաշվին չտեղադրված ժամանակահատվածում Քարտով կատարված գործարքների (այդ թվում՝ առանց հավաստագրման գործարքների) անբարենպաստ հետևանքների ռիսկը կրում է Քարտապանը:
- Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտով համացանցում (ինտերնետ), POS տերմինալներով, բանկոմատներով և/կամ այլ տեխնիկական միջոցներով և/կամ այլ վիրտուալ միջավայրում քարտային զեղծարարության միջոցով կատարված գործարքների արդյունքում Քարտապանի ունեցած կորուստների կամ կրած վնասների համար:
- Բանկը Պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից Քարտն այլ անձի հանձնելու, Քարտն այլ անձի մոտ հայտնվելու, Քարտն ու Քարտի տվյալները (այդ թվում՝ Քարտի համարը, Քարտային հաշվի համարը, Քարտի գաղտնաբառը, PIN կոդը, CVV կոդը) այլ անձանց հայտնի դառնալու հետևանքով Քարտապանի ունեցած կորուստների կամ կրած վնասների համար:
- Բանկը պատասխանատվություն չի կրում համացանցի, բանկոմատների, POS տերմինալների անսարքության, կապի կամ տեխնիկական այլ խնդիրների հետևանքով Քարտապանի ունեցած կորուստների կամ կրած վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Քարտապանի կողմից POS տերմինալների կամ բանկոմատների միջոցով գումար կանխիկացնելիս, Քարտային հաշվից գումարը ելքաքրվում, սակայն փաստացի չի տրամադրվում Քարտապանին: